

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

4

«Իրավաբանական Լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2006թ. սեպտեմբեր, թիվ 4

Արդարությունը պետության կարևորագույն հենարանն է:

Թ. ՄՈՐ

Հայաստանի Հանրապետությունում գործում է նոր՝ Դատական դեպարտամենտի ինստիտուտը: Մինչև վերջերս դատական համակարգը չուներ իր ֆինանսատնտեսական գործառույթները կարգավորող կենտրոնացված համալիր մասնագիտական կառույց: Եվ այս առումով Դատական դեպարտամենտի գլխավոր խնդիրն է ստեղծել ամերաժեշտ բոլոր պայմանները դատարաններին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով: Սպասվում է, որ առաջիկայում ընդունվելիք Դատական օրենսգիրքն էլ ավելի կամրապնդի այս կառույցի լիազորությունները, որոնց բարում կարևորագույններից մեկը դատական դպրոցն է՝ դատավորների ու դատարանների աշխատակազմների վերապատրաստման և նոր նշանակվելիք դատավորների ուսուցման իր գործառույթներով: Ակնկալվում է, որ դատական դպրոցը կիրքի և կապատրաստի մասնագիտական բարձր գիտելիքների ու բարոյական բարձր նկարագրի տեր դատավորների նոր սերունդ, որոնց պահանջը ներկայումս ունի հայրենական արդարադատության համակարգը:



## ԼՐԱԴՈՒ

### ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀՀ-ում ստեղծվել է Դատական դեպարտամենտ, որի գործունեությունը կարգավորվում է «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ՀՀ Դատական դեպարտամենտի դեկանար Էդգար Սեղբակյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

### ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

2006թ.-ի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առենքեր փորձագիտական խորհրդի անդամների նիստը, որի կազմում ընդգրկված են 21 փորձագետներ: Փորձագիտական խորհրդը ունի երեք ենթախորհուրդ: Մանրամասները՝ էջ 3-ում:

### ԴԱՏԱՐԱՆԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

2006թ.-ի սեպտեմբերի 26-ին բացվեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին դատարանի շենքը: Այն դատաիրավական բարեփոխումների վարկային ծրագրի շրջանակներում կառուցված 10-րդ շենքն է և համապատասխանում է դատարանների անվտանգության ու նախագծման միջազգային չափանիշներին: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 702 609,37 դրամ: Զերք է բերվել դականների կահավորանք, գրասենյակային կահույք, մուտքերի հսկման համակարգ և այլն: Ընթաց ունի հինգ հարկ. առաջին և երկրորդ հարկերի մի մասը հասարակական սպասարկման գոտին է, իսկ մյուս մասերը և երրորդ հարկն ամբողջությամբ ծառայողական են: Առաջին հարկում են տեղակայված նաև ամբաստանակավոր պահման խցերը, որոնք կառուցված են անվտանգության պահանջներին համապատասխան:

### ՀԱՍԴՐԱՄ

2006թ.-ի սեպտեմբերի 22-ին Նախագահ Ռոշարյանն ընդունել է ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկային: Քննարկվել են երկու երկների դատախազական համակարգերում ընթացող բարեփոխումները, խոսվել է երկրողմ համագործակցությունը զարգացնելու անհրաժեշտության մասին: Ռոշարյանն ասել է, որ ոստիկանության և հատուկ ծառայությունների հայ-ռուսական համագործակցության հաջող փորձը հուշում է, որ դատախազության համակարգում ևս կարելի է արդյունավետ գործակցություն ծավալել: Յուրի Չայկան ասել է, որ Հայաստան կատարած այցի ընթացքում ձեռք են բերվել գործընկերությունն ակտիվացնելու կարևոր պայմանագրավճարություններ, նախանշվել են համագործակցության կոնկրետ ուղղություններ:

### ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Նախագահ Նորեկու Ընդունակության՝ սեպտեմբերի 13-ի հրամանագրերով ՀՀ անկախության հշակման 15-րդ տարելարձի կապակցությամբ պատվավոր կոչումներ և մեղալներ է շնորհվել արդարադատության համակարգի մի խումբ ներկայացուցիչների: Օրինականության և իրավակարգի պահպանման գործում ունեցած նշանակալի ծառայությունների համար ՀՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչումներ են շնորհվել ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Զինավոր Ղուկասյանին, ՀՀ Վճռաբեկ դատարանի քենական և զինվորական գործերով պալատի դատավոր Դավիթ Ավետիսյանին, ՀՀ Սյունիքի մարզի առաջին դատարանի նախագահ Միշա Ասատրյանին, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Դանիելյանին, ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետ Անդրանիկ Միրզոյանին: Մյուսքար Գոշի մեղալով պարզեատրվել են ՀՀ տնտեսական դատարանի դատավոր Ելենա Սողոմոնյանը, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության ավագ քննիչ Գևորգ Գևորյանը:

## ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱԽՈՂԵՐԻ ՇԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍԵՆԱՍՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ուսանողական տարիների երազանքներից մեկն է եղել Հայաստանում իրավաբան ուսանողների համար հիմնել փաստաբանությանը նվիրված ամենամյա մասնագիտական գիտաժողով-մրցույթ: Կարելի է ասել, որ ներկայում այն իրականություն է դարձել, և 2006թ.-ին գիտաժողովը կազմակերպվում է արդեն երրորդ տարին անընդմեջ: Գիտաժողովի նպատակն է փաստաբանության բնագավառում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, ինչպես նաև նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի դերի բարձրացնան ու կայացմանը: Գիտաժողովը հնարկվորություն է ընծեռում քննադատական երկխոսություններ անցկացնել փաստաբանության ինստիտուտի ներկա վիճակի և հրատապ հարցերի շուրջ: Գիտաժողովը բաղկացած է 2 փուլից՝ գրավոր և բանավոր: Գիտաժողովի գրավոր փուլում առավելագույն միավորներ հավաքած մինչև 10 լավագույն զեկույցների հեղինակները, գիտաժողովի պաշտոնական կանոնների համաձայն, կազմակերպիչների կողմից իրավունք են ստանում որպես զեկուցողներ մասնակցել գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլին: Գիտաժողովի գրավոր և բանավոր փուլերը գնահատելու համար, որպես գիտաժողովի փորձագետ դատավորներ, մեր կողմից իրավիրվում են ճանաչված փաստաբաններ, իրավաբաններ և դատավորներ: Գիտաժողովի հաղողուները կազմակերպիչների և հովանափորների կողմից արժանանում են արժեքավոր մրցանակների: Հոյս ունեմ, որ գիտաժողովի բովով անցած իրավաբան ուսանողները մոտ ապագայում իրենց ուրույն տեղը կգրադարձնեն ՀՀ փաստաբանական համակարգում և ձեռնամուխ կլինեն այդ համակարգի իրական բարեփոխումների իրականացմանը:

### ԿԱՐԵՆ ԶԱԴՈՅՑԱՆ

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» ամենամյա գիտաժողովի հիմնադիր, փաստաբան



## ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՍՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական առաջին գիտաժողովը կայացավ 2004թ.-ին: Գիտաժողովին մասնակցելու հայտեր ներկայացրած 48 իրավաբան ուսանողներից սահմանված ժամկետներում իրենց զեկույցները ներկայացրեցին 17-ը: Գիտաժողովի գրավոր փուլում առավելագույն միավորներ հավաքած 10 լավագույն զեկույցների հեղինակները, գիտաժողովի պաշտոնական կանոնների համաձայն, կազմակերպիչների կողմից իրավունք ստացան որպես զեկուցողներ մասնակցել գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլին: Գիտաժողովի հաղորդ ճանաչվեց և «Լավագույն հոեստոր» մրցանակին արժանացավ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողության Մարինա Սիմոնյանը, իսկ հատուկ դարձավ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի մագիստրոսական 1-ին կուրսի ուսանողությունի Սոնա Հարությունյանը:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՍՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երկրորդ գիտաժողովը կայացավ 2005թ.-ին: Գիտաժողովին մասնակցելու հայտեր ներկայացրած 43 իրավաբան ուսանողներից սահմանված ժամկետներում իրենց զեկույցները ներկայացրեցին 22-ը: Գիտաժողովի գրավոր փուլում առավելագույն միավորներ հավաքած 7 լավագույն զեկույցների հեղինակները, գիտաժողովի պաշտոնական կանոնների համաձայն, կազմակերպիչների կողմից իրավունք ստացան որպես զեկուցողներ մասնակցել գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլին: Գիտաժողովի հաղորդ ճանաչվեց, «Լավագույն հոեստոր» և «Լավագույն գրավոր զեկույց» մրցանակներին արժանացավ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողության Արմեն Վարդապետյանը: Գիտաժողովի 2-րդ մրցանակակիր դարձավ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողության Արմեն Գևորգյանը: Գիտաժողովի հատուկ մրցանակը շնորհվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Արմեն Գևորգյանը: Գիտաժողովի հատուկ մրցանակը շնորհվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողության Արմեն Վարդապետյանին:

## ԻՐԱԶԵԿՈՒՄ

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի և ԱՍՍ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ շնորհել է 2006թ.-ի տեղեկատվության ազատության մրցանակները: Ամենաբարձր գերատեսչություն է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզպետարանը: Տեղեկություն ստանալու իրավունքը ամենաակտիվ և լավագույնս կիրառած հասարակական կազմակերպություն է ճանաչվել Հեղիներյան քաղաքացիական ասամբլեայի Վաճածորի գրասենյակը: Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները հետևողական լրաբանած լրագրող է ճանաչվել «Առավոտ» թերթի լրագրող Հոփիսիմեն Զերեցյանը: Տեղեկություն ստանալու իրավունքը

ամենաակտիվ կիրառած քաղաքացի է ճանաչվել Արտակ Զեյլանյանը: Տեղեկության ազատության տեսանկյունից լավագույն պաշտոնական ինտերնետային էջ է ճանաչվել ՀՀ Գլխավոր դատախազության ինտերնետային էջը: Վերը նշված մրցանակակիրներին տրվել են ոսկե բանալիներ՝ որպես հրապարակայնության խորհրդանիշ: Ոչ ճգոխու պատասխան տրամադրած պետական գերատեսչություն է ճանաչվել ՀՀ տրանսպորտի և կայի նախարարությունը: ՀՀ ամենաափակ գերատեսչություն է ճանաչվել ԱրմենՏելը, որն ամենավատն է կատարում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Այս երկու «մրցանակակիրներին» տրվել են ժանգոտված կողպեքներ՝ որպես գաղտնիության խորհրդանիշ:

### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2006թ.-ի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի անդրանիկ նիստը, որի կազմում ընդգրկված են 21 փորձագետներ: Փորձագիտական խորհրդը ունի երեք ենթախորհուրդ՝ քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային հարցերով, ազգային փորձամասնությունների, կանանց և երեխաների իրավունքների, բնապահպանության, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների հարցերով, քրեական, քրեադատավարական և զինծառայողների իրավունքների հարցերով ենթախորհուրդ:

Փորձագիտական խորհրդի կազմում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրավիրվել են հետևյալ փորձագետները:  
 Ալբա Խոկոյան - «Ծրջակա միջավայրի իրավական պաշտպանության կենտրոն» ՀԿ  
 Աստղիկ Մինասյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  
 Ավետիք Եշխանյան - Հայաստանի հելսինկյան կոմիտե Արքուր Գրիգորյան - ՀՀ փաստաբանների պալատ  
 Արքուր Ղամբարյան - ՀՀ Գլխավոր դատախազության գիտառություննական կենտրոն  
 Արմեն Մանուկյան - ՀՀ-ում Ֆրանշիական համալսարան հիմնադրամ

Որպեսզի երկիրը կարողանա ապրել, հարկավոր է, որ իրավունքներն ապրեն:

#### ՄԻՑԱՎԻՉ

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբ Գրիգոր Բաղդրյան - ՀՀ արդարադատության խորհուրդ Գևորգ Կոստանյան - ՀՀ արդարադատության նախարարություն  
 Կարեն Զարդյան - Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա  
 Կարինե Դանիելյան - Հանուն կայուն զարգացման ասոցիացիա  
 Հայկ Ալումյան - ՀՀ փաստաբանների պալատ  
 Հասան Թամոյան - Եզրիների համայնքի ղեկավար  
 Հրայր Թովմասյան - Գերմանիայի Տեխնիկական Համագործակցության Ընկերություն  
 Մարատ Ասովմյան - «Վորլդ Վիժն Հայաստան» ՀԿ  
 Ռիմա Վարժապետյան - Հրեաների համայնքի ղեկավար  
 Սեդրակ Սեդրակյան - ՀՀ պաշտպանության նախարարություն  
 Վահե Գրիգորյան - ՀՀ փաստաբանների պալատ  
 Վարդան Պողոսյան - «Ժողովրդավարություն» ՀԿ  
 Վիգեն Ջոշարյան - ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետ Տիգրան Հարությունյան - «Նոյան Տապան» լրատվական

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**20.02.2006-31.08.2006**

2006թ.-ի վերը նշված ժամանակահատվածի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքացիներից ստացել է 1794 դիմում, որից 854-ը՝ գրավոր: Գրավոր դիմումներից դրական լուծում է ստացել 121-ը: Վիճակագրական տվյալները փաստում են, որ ստացված բողոքներից շուրջ 34 սոլոսից ավելին ընդունվել է քննարկման: Ստացված 854 գրավոր բողոքներն, ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ունեցել են հետևյալ պատկերը.

- |                                    |     |
|------------------------------------|-----|
| 1. Դատարաններ՝                     | 106 |
| 2. Երևանի քաղաքապետարան՝           | 95  |
| 3. Ոստիկանություն՝                 | 71  |
| 4. Արդարադատության նախարարություն՝ | 61  |

- |   |     |
|---|-----|
| 5. Երևանի քաղապետարաններ՝                         | 60  |
| 6. Դատախազություն՝                                | 55  |
| 7. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ | 38  |
| 8. Պաշտպանության նախարարություն՝                  | 31  |
| 9. Մարզպետարաններ՝                                | 30  |
| 10. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝        | 23  |
| 11. Այլ՝  | 284 |
- Վերը նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ ստացված բողոքների շարքում գերակշռում են դատարանների, ոստիկանության, արդարադատության նախարարության դատախազության դեմ տրված բողոքները:

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՇԻՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՈՒՅԹԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ  
ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՇՈՎՈՒՄԸ**

-ՀՀ-ում ներկայումս ընթանում է դատաիրավական քարեփոխումների երկրորդ փուլը, դատական համակարգում կատարվել են կառուցակարգային փոփոխություններ, ձևավորվել է նոր ինստիտուտ՝ դատական դապարտամենտը։ Պարոն Սեպքակյան, որոնք են դատական դեպարտամենտի հիմնական խնդիրները և գործառույթները, խնդրում են հակիրք ներկայացնել նաև դատական դեպարտամենտի կառուցվածքը։

Դատական դեպարտամենտի հիմնական խնդիրները և գործառույթները կազմավորված են «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Հիմնական գործառույթը դատարանների բնականու գործունեության ապահովումն է: Այսինքն դեպարտամենտը, իրականացնելով իր բոլոր գործառույթները կապված արդարադատության բնականու գործունեություն իրականացնելու հետ, արդարադատություն իրականացնող նարմին չէ: Գործունեության հիմնական ուղղությունները դատական համակարգի ֆինանսարյութեային քաղաքականության, բյուջետային հայտի ձևավորման հետ կապված խնդիրներն են, դատական համակարգի ֆինանսական տարկա պլանավորումը, ֆինանսական միջոցների ծախսումը և դրանց վերահսկողությունը: Վերահսկողությունը իրականացվում է զիսավոր առողջապահությունում: Վերահսկողությունը իրականացվում է զիսավորում դեպարտամենտում որպես առանձնացված ստորաբաժանում հանդիսացղությունը: Ունենք ֆինանսարյութեային վարչություն, որը պլանավորում է դատական համակարգի բյուջետային հայտը: Ունենք արտաքին կապերի և արարողակարգի ծառայություն, որի հիմնական գործառույթը դեպարտամենտի արտաքին, միջազգային կապերն են, միջազգային համագործակցության հետ կապված խնդիրների վերհանումն և դրանց լուծումը: Հաջորդը դեպարտամենտի կենտրոնական արխիվն է, որտեղ կենտրոնացված են դատարանների՝ արխիվացման ենքակա արխիվային գործերը: Մյուս կառուցվածքային ստորաբաժանումը տնտեսական և շահագործման վարչությունն է, որի հիմնական նախատակը դատական համակարգի շենք-շինությունների կապիտալ վերանորոգումն ու շահագործման հետ կապված խնդիրների լուծումն է, որը շատ ակտուալ է և սրան կարելի է առանձին անդրադառնալ: Մյուս կարևոր գործառույթը մանուլի և հասարակության հետ կապերի ստեղծումն է, քանի որ մինչ այսօր դատական համակարգում այս հարաբերությունները համակարգված չեն եղել: Այս ծառայության խնդիրը այդ կապերի համակարգումն ու դատական պրոցեսների լուսաբանումն է: Մյուս կարևորագույն օգակը դեպարտամենտի ընդհանուր բաժինն է, որի հիմնական խնդիրը դատական գրասենյակների միասնական պրակտիկան ձևավորելն է և միասնական գրասենյակային գործավարության ապահովումը: Որպես առանձնացված ստորաբաժանումներ հանդիս են գալիս բոլոր դատարանների աշխատակազմեր՝ առանձին վերցված: Դրանք ևս կենտրոնացված կարգով կառավարվում են կենտրոնական մարմինների կողմից: Մյուսը արդարադատության խորհրդի փոքրիկ աշխատակազմն է, որը իրականացնում է արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների կազմակերպումը: Եվ մեկ այլ ստորաբաժանում՝ դատական դպրոց, որտեղ տեղի են ունենում դատական ծառայությունը և դատական դպրոցի վերապահութաստման դասընթացներ: Հետազայում այս դպրոցը պետք է ընդունելություն կատարի դատավորների պիտանելիության ցուցակում համապատասխան անձանց բնագրելու նպատակով:

-Կարենի՞ է արդյոք ասել, որ գատական դեպարտամենտի ծևափրությով գատակի որևէ համար ստեղծվում են բոլոր նպաստավոր պայմանները՝ ՀՀ-ում արդարադատությունը ավելի սրբունակեան հրականացնեան համար:



իիմնական խնդիրը դատական համակարգին, մասնավորապես դատավորներին, արդարադատություն իրականացնելիս խոչընդունելիք առավելագույնս զերծ պահելն է՝ կազմակերպական առողմով:

-Արդարադասության խորիոյի աշխատակազմի  
ներառումը դատական դեպարտամենտի  
կազմում արդյո՞ք նշանակում է, որ ի վերջո  
արդարադասության խորհուրդը կոչվի  
ավելի արդյունավետ աշխատել՝ կապված  
դատավորներին կարգապահական  
պատասխանատվության ենթարկելու և,  
ինչու չէ, ճակ դատավորի լիազորությունները  
վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ  
հարցերում, քանի որ ենթադրվում է, որ  
արդարադասության խորիոյի աշխատակազմը  
ավելի լրջորեն կուտամնակիրի դատավորների  
վերաբերյալ քաղաքացիների, փաստաբանների  
և հասարակական կազմակերպությունների  
ներկայացվածքուրենքը, և դրանք պրոֆեսոնալ  
հիմնավորվածությամբ կներկայացնեն  
արդարադասության խորիոյի քննարկմանը:

-Ներկայացնելիս Դատական դեպարտամենտի կառուցվածքը՝ ևս բաց բողեքի երկու կարևոր գործառություններ: Դրանք դատական պրակտիկայի և դատական վիճակագրության ամփոփման վարչության գործառություններն են: Այս Վարչությունը ամբողջովին զբաղվում է դատական համակարգում դատական պրակտիկայի ուսումնասիրմանը: Ինչպես գիտեք՝ սահմանադրական վոփոխություններից հետո ՀՀ Վճռաբեկ դատարանին, մասնա-

## ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈԶՈՒՄ

### ՄԵԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈԶՈՒՄ ԿՐԵԼԸ

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ սեպտեմբերի 13-ի հրամանագրով Հայաստանի Հանրապետության անկախության հոչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած ավանդի համար Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում է շնորհվել ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ջինավոր Գրիգորի Ղուկասյանին։ Ջինավոր Ղուկասյանը իր աշխատանքային գործունեության ընթացքում 1966-1970թ.ք. աշխատել է Եղեգնաձորի շրջանի դատախազության քննիչ, 1970-1978թ.ք.՝ Սարտունու և Կայինինոյի շրջանների դատախազ, 1982-1985թ.ք.՝ Երևանի Շահումյանի շրջանի ժողովադատարանի նախագահ, 1985-2003թ.ք.՝ ՀՀ Գերազույց դատարանի (Վճռաբեկ դատարանի) անդամ, իսկ 2003թ. հունիսի 11-ից՝ ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ։ 1999թ. հունիսի 21-ին՝ ՀՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Որակավորման բարձրագույն դասի դատավոր»-ի կոչում։ Ջինավոր Ղուկասյանը մի շաբթ մասնագիտական հոդվածների և գրեթե հեղինակ է։ Նա բավականաչափ ժամանակ է հատկացնում նոր սերնդի իրավաբանների կրթման գործին՝ իր փորձը փոխանցելով նրանց։ Իրավաբանական լրատուն շնորհագրում է Ջինավոր Ղուկասյանին՝ ՀՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչման առիթով, և մաղրում է բեղմնավոր մասնագիտական գործունեություն։



Վորապես ՀՀ Դատական դեպարտամենտին վերապահվեց դատական պրակտիկայի ամփոփման այս առաքելությունը։ Բայց սրամից՝ գործում է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդությունը, և այս խորհրդի աշխատանքները անմիջապես կազմակերպվում են Դատական դեպարտամենտի կողմից։ Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը անմիջականորեն առնչվում է նաև դատարանների նախագահների խորհրդի գործունեության հետ։ Վերջինս ունի 5 հանձնաժողովներ, որոնք բացառապես կազմված են դատարանների նախագահներից։ Դա բյուջետային հանձնաժողովն է, դատական դեպարտամենտի հարցերով հանձնաժողովը, ուսումնական հանձնաժողովը, դատական պրակտիկայի ու վիճակագրության ուսումնասիրման հանձնաժողովը և էքիվայի հարցերով հանձնաժողովը։ Մինչև ՀՀ արդարադատության խորհուրդ՝ հանձնը՝ բոլոր դիմումները, որ ներկայացվում են Դատական դեպարտամենտ, հանձնապատճենական ուսումնասիրման են անցնում հանձնաժողովներում, որի եզրակացությունից հետո ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը, որը միաժամանակ դեկավորում է ՀՀ արդարադատության և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի գործունեության հետ։ Վերջինս ունի 5 հանձնաժողովները, որ ներկայացվում են Դատական դեպարտամենտ, հանձնապատճենական ուսումնասիրման ուսումնասիրման դիմումներից են անցնելով, հարցը կարող է մտցնել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ համապատասխան քննության։ Այս պարագայում, այսուհետեւ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի որպես ՀՀ արդարադատության խորհրդի և ՀՀ դատարանների նախագահների խորհրդի դեկավարի դերը։

*Այս հարցից իր միահարցը արդյունքանական դպրոցի ստեղծումը ենթադրում է, որ դատական կորպուսը կարիք ունի պրոֆեսիոնալ և քարոյական բարձր հատկանիշների տեր դատավորների, որ որքանո՞վ դատական դպրոցը ի վիճակի կյանքի լուծել այդ խնդիրը։*

-*Այս հարցից իր միահարցը արդյունքանական դպրոցի ստեղծումը ենթադրում է, որ դատական կորպուսը կարիք ունի պրոֆեսիոնալ և քարոյական բարձր հատկանիշների տեր դատավորների, որ որքանո՞վ դատական դպրոցը ի վիճակի կյանքի լուծել այդ խնդիրը։*

-Խնդիրը բնորոշ է բոլոր զարգացող երկրներին, քանի որ, եթե երկրում տեղի են ունենում օրենսդրական փոփոխություններ, այստեղ դատավորներին նույն օրենսդրական փոփոխությունների շրջանակներում վերապատրաստելու խնդիր է առաջանալ։ Քանի որ, եթե դատավորը անընդհատ դատավարությունների մեջ է,

անհրաժեշտություն է առաջանալու, որպեսզի նատարելան որոշակի ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ անցնի։ Այս դասընթացների հիմնական նպատակն է դատավորներին հասանելի դարձնել օրենսդրական փոփոխությունները, Հայաստանում նախադեպի ինստիտուտի կիրառումը և միջազգային ու Եվրոպատարանի կողմից նախադեպի իրավունք ունեցող դատական որոշումները։ Այս առումով դպրոցը յուրօհնակ առաքելություն ունի՝ իրականացնելու այդ գործառույթները։

*-Ձեզ, որպես դատական դեպարտամենտի դեկավարի, այսօր բավարար ում է դատարանների աշխատակազմների իրավաբան մասնագետների պրոֆեսիոնալ մակարդակը, և այս առումով առաջիկայում ի վեց եք պատրաստում ձեռնարկել։*

-Ակսած սույն թվականի հոկտեմբերի 6-ից՝ դատական դպրոցը կենտրոնացված կարգով իրականացնելու է դատական ծառայողների վերապատրաստման դասընթացներ։ Վերապատրաստում անցած դատական ծառայողները անցնելու են հարցագրույց, և համապատասխան հանձնաժողովը որոշում է կայացնելու տվյալ դատական ծառայողի՝ պաշտոնին համապատասխանության հարցի վերաբերյալ։ Հանձնաժողովը պետք է պարզի արդյունք տվյալ դատական ծառայողը համապատասխանության հարցի վերաբերյալ է, համապատասխանում է մասսմբ, թե՞ չ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին։ Եվ այս ամենը պետք է պարզի համապատասխան գնահատման չափորոշիչների միջոցով, որոնք մշակվել են դատական դեկավարանների կողմից։ Չեմ կարող ասել, թե այսօր լավագույն կադրերն են աշխատում դատական համակարգում, սակայն կան առանձին լավագույն կադրեր, որոնց վրա կարելի է հենվել և որոնց միջոցով կարելի է դատական ծառայողների վերապատրաստման պրոցեսը տրամադրանական ավարտին հասցնել։ Իսկ կադրային խնդիրը իր հոսունության մեջ շարժվող խնդիր է, քանի որ կադրերը գալիք են, ավելի են մասնագիտանում դատական ծառայության մեջ, ձգուում են ավելի բարձր պաշտոնին, ինչու չեն անդամ դատավոր դատական դպրոցում։

## ՏԵՍԱԿԵՑ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որպես գերազույն արժեք է ճանաչում մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սա նշանակում է, որ բոլոր պետական մարդիների առաջնային խնդիրը պետք է լինի մարդու իրավունքների սպասուվումը, երաշխափորումը և պաշտպանությունը: Սահմանադրական դատարանի՝ ինչպես պետական այլ մարդիների դերն ու նշանակությունը իրավական պետությունում, պայմանափորված է նրա գործառույթներով, նաև ավագանության, մարդու իրավունքների պաշտպանության, օրինականության և իրավակարգի ապահովման ու պահպանման գործում ունեցած նրա լիազորություններով:

2005թ.-ի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրության մեջ ներմուծեցին մի շարք դրույթներ, որոնք նոր երաշխիքներ են ստեղծում մարդու իրավունքների պաշտպանության համար և ավելի են համապատասխանում միջազգային և զարգացած երկրների սահմանադրական պրակտիկային: Այդ նորմերից է նաև ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, համաձայն որի, Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր որ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այլ ակտով իր նկատմամբ կիրավուած օրենքի դրույթը սահմանադրականությունը: Սահմանադրական փոփոխությունները շատ քաղաքացիների կողմից ընդունվեցին մեծ ցնծությամբ հենց այս դրույթի պատճառով, քանի որ «մարդի ստանում էր մի հնարավորություն և պաշտպանելու իր խախտված իրավունքը»: Պրակտիկան ցոյց է տալիս, որ հասարակության մի ստվար մաս Սահմանադրական դատարանը ընկալում է որպես հերթական ատյան, որը կրնելի իր իրավունքների խախտումների վերաբերյալ գործեր, և գրեթե համոզված է, որ հարցը կլուծի հօգուտ իրեն: Այդ մասին են վկայում նաև ՀՀ Սահմանադրական դատարանին ուղղված բազմաթիվ անհատական դիմումները, որոնցում քաղաքացիները դիմում են ոչ թե հակասահմանադրական ճանաչելու օրենքի դրույթը, որը դատարանի կողմից կիրավուել է իրենց նկատմամբ կոնկրետ գործով, այլ դիմում են խնդրանքով՝ անվավեր ճանաչել ընդհանուր իրավասության դատարանի ակտը: Այս հանգամանքը վկայում է ոչ միայն դատական համակարգի նկատմամբ անվատահության մասին, միջազգային ատյաններում գործի երկարատև քննության մտավախտության, ինչի արդյունքում հարցը տվյալ անձի համար կվորցնի իր նշանակությունը, այլև հասարակության իրավագիտակցության մեջ Սահմանադրական դատարանի վերաբերյալ ունեցած բյուր պատկերացման մասին:

Ժողովրդավարական հասարակարգում Սահմանադրական դատարանի ները պայմանափորված է պետական կառուցակարգում ունեցած նրա տեղով և դիրքով: Որոշ երկրներում Սահմանադրական դատարանը դիտարկվում է իշխանության երեք թերից դրւու և կոչված է երաշխափորելու իշխանության թերի հավասարակշուրջությունը: Այս շարք երկրներում (Գերմանիա, Ռուսաստանի Դաշնություն, Հայաստան և այլն) Սահմանադրական դատարանը համարվում է իշխանության դատական թիվ ինստիտուտներից մեկը և Սահմանադրությամբ է նրա վերաբերյալ դրույթները զետեղված են դատական իշխանությանը վերաբերող գիլտում: Ինչպիսին էլ լինի սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի փոխհարաբերակցությունը իշխանության թերի հետ, այնուամենայնիվ, պատմականորեն նրա առաքելությունը Սահմանադրության գերակայության երաշխափորմն է, սահմանադրական արդարադատության իրականացումը, առաջին հերթին՝ մարդու իրավունքների պաշտպանության միջոցով:

Վերոնշյալ սահմանադրական դրույթի համաձայն՝ անհատական դիմումի հիման վրա սահմանադրական արդարադատության օբյեկտ է դառնում դատական ակտը, որով կիրավել է Սահմանադրությանը հակասող օրենքի



դրույթ, այսինքն՝ Սահմանադրական դատարանը քննում է դատական ակտի սահմանադրականությունը: Այս եղանակով իհարկե պաշտպանվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, սակայն ոչ ուղղակիրեն: Միշարք զարգացած ժողովրդավարական երկրներում Սահմանադրական դատարանի կողմից մարդու իրավունքների անմիջական պաշտպանությունը ամրագրված է Սահմանադրությամբ: Այդիսի երկրներից են Գերմանիան, Խոսանիան, Շվեյցարիան: Ըստ Գերմանիայի Հիմնական օրենքի՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ հանրային հշանակությունը խախտել է Սահմանադրությամբ ամրագրված որոշ իրավունքներից որևէ մեկը (օրինակ՝ դատարանում լսելու իրավունքը, անձի պատության իրավունքը, իրավահավասարության իրավունքը): Մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության առումով, կարծում ենք, ուսամենի է զարգացած, սահմանադրական մշակույթ ունեցող երկրների, հատկապես Ֆրանսիայի փորձը: Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը մի շարք այլ լիազորությունների շարքում օժտված է նաև պարտադիր կարգով օրգանական օրենքների և պատամենտի պայտաների կանոնակարգերի սահմանադրականության հարցը լուծելու իրավատերյամբ՝ մինչև դրանց ընդունումը: Մինչև վավերացումը օրենքները և կարող են ներկայացվել Սահմանադրական խորհուրդ՝ նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի և Սենատի նախագահների կամ 60 պատգամավորների կամ 60 սենատորների դիմումով:

Չնեարկվող սահմանադրական դրույթի նախատեսումը, անշուշտ, առաջընթաց, բայց ոչ բավարար քայլ է մարդու իրավունքների պաշտպանության, սահմանադրական արդարադատության կայացման համար: Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, իրավական պետության կայացման ճանապարհին առավել նպատակահարմար է որոշել օրենքների՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը մինչև դրանց ուժի մեջ մտնելը և հասարակական հարաբերությունները կարգավորելը, քան որոշել օրենքների սահմանադրականության հարցը դրանց ուժի մեջ մտնելուց հետո, եթե այլև կարգավորել են որոշակի հասարակական հարաբերություններ և, հնարավոր է, խախտվել են իրավունքներ, որոնց վերականգնումը, գուցե, այլևս անհնար:

**Արփինե Եղիկյան**  
Հայաստանի երիտասարդ իրավաբանների  
ասցիսիայի անդամ,  
իրավաբան



## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԻՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՆԵՐԸ

Ցուրաքանչյուր տարի աշխարհի տարրեր երկրների հեղինակավոր իրավաբանական ամսագրեր որոշում են իրենց երկրների կամ աշխարհանակի ճանաչված ընկերությունների լավագույն իրավաբանական դեպարտամենտներին: Հայաստանի Հանրապետությունում դեռևս նմանատիպ մրցույթ չի անցկացվում, ուստի 2007թ.-ին իրավաբանական լրատուն պատրաստվում է ՀՀ-ում նոյնական անցկացնել հանրապետության լավագույն իրավաբանական դեպարտամենտներին դրոշերու մրցույթ: Ինչու, իրավաբանական լրատուի այս համարում ընթերցողին են ներկայացվում Եվրոպայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության լավագույն իրավաբանական դեպարտամենտները:

### ԵՎՐՈՊԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ

## ԻՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՆԵՐԸ

2006թ.-ի հունիսի 28-ին Լոնդոնում տեղի ունեցավ Սեծ Քրիտանիայի «T e La e» հանրաճանաչ ամսագրի պարզեցների հաճանակ հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին շուրջ 1500 իրավաբաններ: Պարզեցները տրվեցին վեց անվանակարգերում, այդ թվում «Կորպորատիվ իրավաբաններ» անվանակարգում: Եվրոպայի լավագույն իրավաբանական դեպարտամենտ է ճանաչվել «P » ընկերության իրավաբանական դեպարտամենտը: Երկրորդը այս անվանակարգում «Ga e G e» ընկերության իրավաբանական դեպարտամենտն է, իսկ երրորդը «BASF» ընկերության իրավաբանական դեպարտամենտը:

### ԱՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ

## ԻՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՆԵՐԸ

2006թ.-ի ապրիլին «C a e C e» ամերիկյան ամսագիրը անցկացրեց ԱՄՆ «Ընկերության լավագույն իրավաբանական դեպարտամենտ» մրցույթը: Ընկերությունների իրավաբանական դեպարտամենտների դեկավարներին, ովքեր ընտրվեցին ԱՄՆ-ի 500 խոշորագույն ընկերությունների ցամկում, ամսագրի կողմից ուղարկվեց հարցարքերիկ: Հարցարքերիկը ներառում էր հետևյալ հարցերը. որքա՞ն է ձեր դեպարտամենտի բյուջեն, ո՞րն է դատական գործերի վարման՝ ձեր կազմակերպության ուղղմավարությունը, ինչո՞ւ մեր տեսնում ձեր ընկերության հիմնական նվաճումները: Պատասխանները ամփոփվեցին և վերլուծվեցին ամսագրի խմբագրության կողմից, որի արդյունքում քենարկության միջոցով ընտրվեցին երկրի լավագույն իրավաբանական դեպարտամենտը և երեք մրցանակակիրները:

«Թիմային ողի» մրցանակին արժանացավ «Ֆորդ» ընկերության իրավաբանական դեպարտամենտը: Մրցույթի գնահատող փորձագետների կարծիքով «Ֆորդ» ընկերության իրավաբանները հաղթեցին մրցույթը՝ թիմում աշխատելու իրենց կարողությամբ, ոչ միայն միմյանց միջև փոխգործակցության կարողությամբ («Ֆորդ» ընկերության իրավաբանական դեպարտամենտում աշխատում են շուրջ 300 աշխատակիցներ՝ ամբողջ աշխարհում), այլ նաև ընկերության մյուս մասնագետների դեկավարության, չանրային կապերի կառավարչների, ճարտարագետների և այլն: Դատավարությունների հարցով «Ֆորդ»-ի իրավաբանների հաջողականությունները պատասխանական դատավարություններից: Ցուրաքանչյուր տարի ընկերության



իրավաբանական դեպարտամենտը մասնակցում է մոտ 70 դատավարությունների և հաղթում է գործերի մոտ 80%-ը: 2005թ.-ին ընկերության իրավաբանական դեպարտամենտի ծախսերը կազմել են ընկերության եկամուտների 0,19%-ը, որը տարեցտարի նվազում է: Մրցույթի մրցանակիրներն են «M c f » (իրավաբանական դեպարտամենտի աշխատակիցների թիվը 328), «Be » (իրավաբանական դեպարտամենտի աշխատակիցների թիվը 95) և «E.I.d P de Ne a d C a » (իրավաբանական դեպարտամենտի աշխատակիցների թիվը 165): ընկերությունների իրավաբանական դեպարտամենտները:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇԽՈԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԻՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՆԵՐԸ

2006թ.-ի սեպտեմբերի 26-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ռուսաստանի դաշնության լավագույն իրավաբանական դեպարտամենտների պարզեւատրման հանդիսավոր արարողությունը, որը կազմակերպվել էր «Կորպորատիվ իրավաբան» ամսագրի և «P e & M e e » ընկերության կողմից իրականացված ծրագրի արդյունքներով: «Հեռահաղորդակցություն» անվանակարգում լավագույն իրավաբանական դեպարտամենտ է ճանաչվել «ՎիմպելՉոլոմ» ընկերության իրավաբանական դեպարտամենտը, որի անունը մրցանակը ստացել է դեպարտամենտի տնօրին Ալեքսանդր Շիտկովը: «Մետալուրգիա» անվանակարգում հաղթել է «Նորիլսկի Նիկել» ընկերության իրավաբանական դեպարտամենտը, «Սպառողական ապրանքներ» անվանակարգում «Վիմբ-Բիլլ-Դան» Սննդարձերը՝ ընկերության իրավաբանական դեպարտամենտը, «Քիմիա և նավային թիմիա» անվանակարգում՝ «Եվրո-Քիմ» ընկերության իրավաբանական դեպարտամենտը, «Ֆիմիա և նավային թիմիա» անվանակարգում՝ «Ֆիմություն» ընկերության իրավաբանական դեպարտամենտը, «Ֆիմանս Կապիտալ» ընկերության իրավաբանական դեպարտամենտը, «Անվա և զագ» անվանակարգում «ՏՆԿ-ՎՈ-Մենջմենք» ընկերության իրավաբանական դեպարտամենտը:



# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Կողումբիայով ամուսնանալ ցանկացողները պարտավոր են հաճախել երեքամյա դասընթաց, որտեղ դասավանդում են հոգեբանության և ընտանիքի իրավունքը: Դասընթացներն ավարտելուց հետո ունկնդիրները քննություն են հանձնում և ստանում դիպլոմ, որի հիման վրա ձևակերպվում է ամուսնության վկայականը:

Հնդկական ցեղերից մեկի մոտ գոյություն ունի օրենք, ըստ որի, ամհավատարիմ կնոջը պատժում են հետևյալ կերպ. բանտ են նստեցնում նրա ամուսնուն:

Իռլանդական օրենքով ամեն մի կին համարվում է իր ամուսնու սեփականությունը, ինչպես «ձիմ կամ կովը»: Դա գրված է ամուսնության վերաբերյալ գործող դատական վճռի մեջ՝ Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում:

Դատավոր - Եվ ամոր չէ՞ Զեզ այդքան հաճախակի ընկնել դատարան: Ամբաստանյալ Ոչ, ինչ եք ասում, ես միշտ ել կարծել եմ, որ դա ամենահարգարժան հիմնարկներից մեկն է:

Դատական գործը քննվում է արդեն մի քանի ժամ: Ամբաստանյալը անհամբերթյամբ հարցնում է փաստարաններ:

- Իսկ ինչքա՞ն է այն դեռ շարունակվելու:
- Ինձ համար՝ ևս մեկ ժամ, իսկ Զեզ համար՝ երկի երեք տարի:

- Այո՛, պարոնայք դատավորներ, ես յուրացրել եմ այդ ուրսուն միլիոն չորս հարյուր փարսուն հազար դրամը, բայց ես սովոր եմ եղել, պարոնայք դատավորներ, սոված:

Դատավորը հարցաքննում է տուժողին:

- Ինչո՞ւ դոր օգնություն չեք կանչել, երբ կողոպտիչը ձեր ձեռքից հանում էր ուկյա ժամացոյցը:
- Ես վախեցա բացել բերանս. ես չորս ուկյա ատամներ ունեմ:

Դատավոր Զեր դրությունը դժվարանում է նրանով, որ դուք ալիքի չունեք: Որևէ մեկը տեսա՞լ է Զեզ այն ժամանակ, երբ տեղի է ունեցել գողությունը: Ամբաստանյալ Փառք աստծո, պարոն դատավոր, ոչ ոք չի տեսել:

Ոչ գեղեցիկ և կրվարա մի կին խորհուրդ է հարցնում փաստարանից:

- Ուզում եմ բաժանվել ամուսնուց: Ե՞՞ր է ամենահարմար պահը:
- Նրա ծննդյան օրվա նախօրյակին: Դա կինի ամենալավ նվերը...

Անուհնները երեք երեխաներ ունեն: Դատարանում ամուսնալուծության ժամանակ վեճ առաջացավ այն հարցում, թե ինչպե՞ս բաժանեն երեխաններին: Ի վերջո կինն ասում է.

- Գնաճը տուն: Կվերադառնանք մի տարի հետո, երբ մենք արդեն կունենանք չորրորդ երեխան:

«Ես չեմ ուզում, որ որևէ մեկը խառնվի իմ ընտիր կյանքին»:  
(բացատրությունից)

«Ես համոզված եմ, որ թեև նա խմած էր, բայց ինձ ճանաչեց, որովհետև մտեցավ ինձ և ասաց՝ «Ստոր սրիկա»:

(վկայի ցուցմունքից)

«Խսաշատրյանին ոստիկանություն են թերել գրոսայգուց, որտեղ նա խմել է վերարկուի տակ բաքրյած կենդանի աքլորի հետ»:

(վկայի հարցաքննության արձանագրությունից)

«Նվիրատվության պայմանագիրը համարել անվավեր, քանի որ գործարքը կնքելու պահին նվիրողը փոխված է եղել հատակին և չեր կարող սեփական ձեռքով ստորագրել պայմանագիրը»:

(վճռից)

«Ամբաստանյալը, հաշվելով հյուրերին, եզրակացրեց, որ նրանցից մեկն ավելորդ է և, բացելով պատուհանը, նրան առաջարկեց դուրս գալ բակ»:

(դատավճռից)

«Կողմերը գոյրի բաժանում կատարելու անհնարինության պատճառով հրաժարվում են հայցային պահանջներից և պարտավորվում են շարունակել համատեղ կյանքը»:

(որոշումից)



## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Փաստ.՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ ega\_e\_e\_e@aa.a.a

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,  
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝  
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝  
Նարինե Կարապետյան

## «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակ՝ 500 օրինակ

Ծավալը՝ 1 տպ. մամուլ

Ստորագրված է տպագրության  
30.09.2006թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից